

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/4

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Կ ընդ Գ Գրուպ» ՍՊԸ դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 18.07.2015 թ-ի թիվ 6108439 ակտի դեմ:

«Կ ընդ Գ Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի հուլիսի 1-ին Ընկերության՝ ք.Կապան, Հ.Ավետիսյան 7/23 հասցեում գտնվող խանութից անձանոթ անձը ցանկանալով գնում կատարել, ընտրել է 3600 դրամի ապրանք, որի դիմաց վճարել է 5000 դրամ: Գումարը վերցնելուց հետո վաճառողուհին մանրի հետ միասին ցանկացել է տրամադրել ՀԴՄ կտրոն, սակայն սարքը տվյալ պահին չի աշխատել բնականոն կերպով և, չնայած աշխատողի կիրառած ջանքերին, ՀԴՄ կտրոն չի տպել: Այնուհետև վաճառողուհին խնդրել է գնորդին սպասել և նրա ներկայությամբ զանգահարել է Ընկերության տնօրենին, որի հրահանգով կրկին գնորդի ներկայությամբ զանգահարել է ՀԴՄ սպասարկողին խնդիրը շտկելու նպատակով: Այդ ընթացքում գնորդը առանց զգուշացնելու վերցրել է ապրանքը և չսպասելով նույնիսկ որպեսզի մանրը վերադարձվի դուրս է եկել խանութից: Այնուհետև նույն անձը հետ է վերադարձել և ներկայանալով որպես հարկային տեսուչ՝ ցույց է տվել ստուգման հանձնարարագիրը, որից հետո շտկելով ՀԴՄ-ի անսարքությունը կատարել է համապատասխան գործողություններ:

Նկարագրված իրավիճակի մասով ստուգման ընթացքում վաճառողուհին ներկայացրել է գրավոր բացատրություն (կից ներկայացվում է), որը չնայած կցվել է ստուգման ակտին, սակայն ինչպես երևում է խախտման բովանդակության նկարագրությունից հաշվի չի առնվել, մինչդեռ ստուգում իրականացնող անձիք պարտավոր էին իրականացնել հանգամանքների համակողմանի վերլուծություն՝ պարզելու համար անձի մեղավորությունը ՀԴՄ կտրոնի չտրամադրման հարցում: Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Տվյալ դեպքում անձի մեղավորությունը ոչ միայն ապացուցված չէ, այլև բացակայում է, քանի որ վաճառողուհին ձեռնարկել է բոլոր միջոցները ՀԴՄ կտրոնը տրամադրելու համար, մասնավորապես՝ զանգահարել է ՀԴՄ սպասարկողին, որն էլ հայտնել է, որ խնդրի լուծման նպատակով համապատասխան աշխատակիցը կմոտենա խանութ:

Հետևաբար, Ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 18.07.2015 թ-ի թիվ 6108439 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 10.06.2015 թ-ի թիվ 6108439 հանձնարարագրի համաձայն «Կ ընդ Գ Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 18.07.2015 թ-ի թիվ 6108439 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Գոռ Անդրեասյանի կողմից 01.07.2015 թ-ին ժամը 13:35-ին ք.Կապան, Հ.Ավետիսյան 7/23 հասցեում գտնվող «Կ ընդ Գ Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող խանութից կատարվել է 3600 դրամի չափով՝ մեկ հատ ծաղկեփունջ «Սորինի» կոմֆետներով, որի դիմաց կանխիկ վճարված գումարը վաճառողուհի Անի Դավթյանը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգումն իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 13:43-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Չմուտքագրված գումարը ժամը 13:43-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 13:45-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 3600 դրամ գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշման 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում գնումն իրականացրած հարկային տեսուչ Գոռ Անդրեասյանը պնդեց, որ 01.07.2015 թ-ին ժամը 13:35-ին ընկերությանը պատկանող խանութից գնել է մեկ հատ ծաղկեփունջ «Սորինի» կոմֆետներով՝ գումարով 3600 դրամ, որի դիմաց վաճառողուհու կողմից ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Գոռ Անդրեասյանը հավելեց նաև, որ գումարը փաստացի վճարվել է ՀԴՄ-ից մի քանի մետր հեռավորության վրա և վաճառողուհին անգամ չի մոտեցել ՀԴՄ-ին վճարված գումարը մուտքագրելու և ՀԴՄ կտրոն տրամադրելու համար:

Ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ վերոգրյալ գնումը ՀԴՄ չմուտքագրելը և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելը պայմանավորված է եղել ՀԴՄ-ի անսարքությամբ: Ընդ որում, քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀԴՄ-ն անսարք վիճակում գտնվելու հանգամանքն ընկերությանը հայտնի է եղել աշխատանքային օրվա սկզբից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.03.2015 թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 16-րդ կետի համաձայն, կազմակերպության ՀԴՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է աշխատանքային օրվա (հերթափոխի) սկզբում ստուգել ՀԴՄ-ի աշխատանքը, ՀԴՄ-ում տեղադրել Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող կտրոնային ժապավեն և այն միացնել:

Կանոնների 21-րդ կետի համաձայն, ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կենտրոն) ներկայացնում է հայտ՝ համաձայն N 2 ձևի, անսարքության վերացման համար, հայտի մեկ օրինակը ներկայացնելով հակային տեսչություն: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են Կանոնների 16-րդ, 21-րդ կետերի, ինչպես նաև 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 18.07.2015 թ-ի թիվ 6108439 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ